№ 173 Հոկտեմբերի 10 (22) 1879 Հոկտեմբերի 10 (22) № 173

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տխուր երևոյթ։—Ներքին տեսութիւն։ Գեղարուեստական դահլիճ։ Նամակ Ախալքալաքից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Նամակ Պարսկաստանից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Կանանց խնդիր։

ՏԽՈՒՐ ԵՐԵՒՈՅԹ

Ամեն կողմից նշմարվում է հայոց հասարակութեան մէջ մի նոր բարոյական և մտաւոր շարժում։ Հայի ազգային ինքնաճանաչութիւնը զարթել է, հայոց գրականութիւնը և լրագրութիւնը բաւական առաջադիմութիւն են անում։ Հայը սկսել է հետաքրքրվել իր մայրենի լեզուով տրվող թատրոնական ներկայացումներով, մենք սկսում ենք փոքր ի շատե ընդունակութիւն ցոյց տալ զանազան ընկերութիւններ կազմելու, մեր դպրոցների թիւը օրից օր բազմանում է....

Միայն մեր ազգի մի հասարակական երևոյթ, մի հասարակական գործիչ մնում է նահապետական դրութեան մէջ, մնում է անշարժ.... Դա հայ ընտանեկան կազմակերպութիւնն է։ Հայ ընտանիքը մնում է նոյն անշարժ, ամեն նոր շարժում, նոր սերունդի անհատութիւնը և ազատութիւնը հալածող։

Դա մի շատ տխուր երևոյթ է, որովհետև ինչքան էլ զարգանայ մի ազգի կեանքը, նա երբէք իր կատարեալ զարգացմանը չէ կարող հասնել, մինչև որ ընտանիքը, հասարակական կեանքի այդ հիմքը, կը մնայ անշարժ, կը մնայ անհատութիւնը հալածող, չի մասնակցի ազգի ընդհանուր կեանքի նոր շարժմանը....

Ազգը առաջ է գնում,—իսկ ընտանիքը յետ է մնում։ Հին սերունդը շարունակում է ճնշել նոր սերունդը, մեռցնել նրա մէջ ամեն մարդկային զգացմունքներ....

Այդ տեսակ հանգամանքներում ի՞նչ առաջադիմութիւն կարելի է սպասել ազգի մէջ, երբ ընտանիքը շարունակում է ընծայել հասարակութեանը ստրկացած, բթացրած, ոգով ճնշված, նախանձոտ քաղաքացիներին....

Մենք գանգատվում ենք որ հայերը, և ամենաղարգացած հայերը, բարձր ուսում ստացած երիտասարդները, ինչքան գիտութիւն էլ ընդունէին համալսարանական դասընթացքներից, մնում են նոյն հին ոգով, նոյն նախանձոտ, միաբանութեան թշնամի, ինտրիգաներ լարող.... Բայց մենք չենք մտածում որ այդ տխուր երևոյթի մեղաւորութիւնը մեր ընտանիքին է պատկանում... Միթէ բռնաւոր, ճնշող, հալածող, անհամբերող, ամեն մարդկային զգացմունքը մեռցնող ընտանիքից կարող են դուրս գալ անհատապէս զարգացած, ազատութիւն սիրող, համբերող, անկողմնապահ, ազատամիտ քաղաքացիներ.... Հայ ընտանիքն է որ աղավաղում է հայոց նոր սերունդի բնաւորութիւնը։

Մեր բոլոր անմիաբանութեան, չարութիւնների, հայի անհաշտ ոգու, նախանձի և ինտրիգաների սերմերը սերմանվում են հայոց ընտանիքում և արդէն այդ գեղեցիկ յատկութիւններով զինաւորված՝ լուսաւորված հայը հանդէս է դուրս գալիս ազգային կեանքի ասպարէզը....

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԴԱՀԼԻՃ

Անցեալ օրը իմ բարեկամներից մի քանիսը մտադրվեցին այցելել Պ. Միրզոյեվի պատկերների գեղարուեստական դահլիճը. ես էլ օգուտ քաղեցի դէպքից և բարեկամներիս հետ միասին այցելեցինք դահլիճը։ Զը նայելով, որ այդ երկրորդ անգամն էր, որ ես այցելում էի այդ դահլիճը, այնու ամենայնիւ ես այնտեղ մայ մի և նոյն զմայլմամբ իբրև թէ այդ իմ առաջին այցելութիւնը լինէր. ամեն անգամ, երբ ես մտնում եմ այդ դահլիճը, իւրաքանչիւր անգամ էլ ես մի առանձին բաւականութիւն եմ զգում։ Պատկերներն այնքան գեղեցիկ ու զմայլեցուցիչ են, որ նրանք մեզ ակամայ յիշեցնում են եւրոպական քաղաքների ճոխ թանգարանները։ Պատկերներից շատերը, հին և նոր քանքարաւոր նկարիչների աշխատասիրութիւններ են. նրանց շատերի վրա մարդ նայելուց չէ կշտանում. կան այնպիսիները, որոնց վրա մարդ պատրաստ է ամբողջ ժամերով զմայլել, և դարձեալ չը կշտանալ նայելուց։ Օրինակ այնտեղ կայ պատմական մի բաւականին մեծադիր պատկեր (դրժբաղդաբար ես չեմ կարող ասել թէ ով է նրա ստեղծողը, բայց նա մի ճշմարիտ ստեղծագործութիւն է), նա ներկայացնում է այն րոպէն, երբ Ցուդիթը գլխատելով ասորոց Հոլոֆեռնէս զօրավարին, ազատում է իր մայրենի քաղաքը թշնամիների պաշարմունքից. Ցուդիթն աչքերը երկինք բարձրացրած, կարծես իր մէջ մի մեծ կրօնական մխիթարութիւն է զգում։ Նրա սև սաթի նման մեծ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՆԱՆՑ ԽՆԴԻՐ

Օրուայ հարցերի մէջ նշանաւոր տեղը պէտք է բռնէ կանանց աշխատանքի խնդիրը։ Ցիրաւի, այս վերջին ժամանակները թէ Ռուսաստանի և թէ ամբողջ Եւրոպայի մամուլը մեծ ուշադրութիւն է դարձնում դրա վրա։

Կանանց աշխատանքի անհրաժեշտութիւնը վաղուց հասկացաւ Եւրոպան, որը և իրագործեց և այժմ, ինչպէս յայտնի է, շատ տեղերում կանանց աշխատանքը այնպիսի դրութեան մէջն է գտանվում, որ մենք կարող ենք նախանձել նրանց։ Եւրոպան հասկացել է, որ կինը բացի ընտանեկան փակ շրջանի մէջ գործելուց և դաստիարակչութիւնից՝—ոչ թէ միայն կարող է—այլ պէտք է ունենայ մի ուրիշ միջոց իր անկախութիւնը պահպանելու համար. նա պէտք է անշուշտ մի որ և իցէ արհեստ գիտենայ իր կեանքի ապահովութեան համար։ Նոյն իսկ ամուսնացած կինը կարիքութիւն ունի արհեստի, որով կարողանայ օգնել իր ամուսնուն, թեթևացնել նրա աշխատանքը, որով նա առաւել իրաւունք կունենայ կոչվելու ընկեր ամուսնու և ոչ նրանից կախումն ունեցող—նրա ստորադրեալ ստրուկ։ Արհեստ գիտենալ հարկաւոր է առաւել ևս այրի կանանց, որոնք ամուսնու մահուանից յետոյ իրանց ապիտութեան պատճառով մնում են անճարացած և նրանց վերջը լինում է կամ սովամահ լինելը և կամ.... ամեն տեսակ անբարոյականութիւնների ձեռք զարնելը։ Արհեստ գիտենալը հարկաւոր է նոյն իսկ օրիորդներին՝—որոնց եթէ չէ յաջողվում ամուսնանալ, գոնէ ապահովացրած կունենան իրանց կեանքը սեփական աշխատութեամբ, կունենան իրանց ապրուստը և թշուառները ստիպված չեն լինի սպասել օր օրուան վրա, որ ահա մէկը կը գայ, կամուսնանայ նրանց հետ և մի կտոր հաց կուտացնէ։

Այո, Եւրոպան հասկացաւ այս բոլորը և ահա ինչու, այս և սրա նման շատ երևոյթներ, որոնց մի առ մի թուելը և անհնարին է և ձանձրալի, աչքի առաջ ունենալով, արտասահմանում առաջարկվեցաւ կանանց արհեստանոցների բանալու միտքը, որը սկզբում շատ խորթ թուեցաւ ժողովրդին և շատ փոքր մասի համակրութիւնը շարժեց, բայց այնու ամենայնիւ սկզբնարարները ուշադրութիւն չը դարձնելով դրանց կարծիքի և արհամարանքի վրա—մեծ եռանդով սկսեցին առաջ տանել գործը. համբերեցին շատ տեսակ նեղութիւնների և արգելքների և վերջապէս յաղթեցին հասարակական նախապաշարմունքները և շարժեցին մեծամասնութեան համակրանքը. նրանք փորձով ցոյց տուին դրանց թէ անհրաժեշտութիւնը և թէ օգուտը և այնուհետև լիքը՝ հասարակութեան մեծամասնութիւնը սկսեց աշխատակցել դրանց։

Մենք այստեղ առաջ կը բերենք, ինչպէս մի գերմանական ընկերութիւն սկսեց իր գոյութիւնը և ինչպէս կարճ միջոցում ընդարձակվեցաւ, ըսկսելով իր ամեն գործունէութիւնը փոքրից։ Առհասարակ գերմանուհին սկսեց ընթանալ ծանր քայլերով. բայց նա գնում էր և դարձեալ—հաստատ քայլերով։ Նա ֆրանսիացի կնոջ նման չը կամեցաւ բոլոր իրաւունքները միանգամից ձեռք բերել, գուցէ զգալով, որ այդ անկարելի է, և դրա համար չը հարկադրվեցաւ և հազիւ թէ հարկադրվի ապագայում յետ մնալ։ Թող ներուի մեզ, եթէ գերմանուհու գործունէութեան եղանակը ցոյց տալու համար մենք կանգ կառնենք «Շվաբեան ընկերութիւն կանանց» *) (Schwäb. Frauenverein) անունով ընկերութեան փոքր ի շատէ մանրամասն նկարագրութեան վրա, որը ներկայումս գտանվում է մայրաքաղաքի ամենաաւելի փողոցներից մէկի վրա կառուցած ամրոցի նման գեղեցիկ, բաղմայարկ տան մէջ։

Այս ընկերութիւնը կանանց հիմնարկութիւն է և գոյութիւն ունի 1873 թուականից. սրան, ինչպէս ասացինք, հիմնել են կանայք, որոնց նպատակն է եղել միջոց տալ կանանց աշխատելու։

Այս ընկերութիւնը, չը նայելով որ միայն վեց տարի է ինչ գոյութիւն ունի, արդէն հիմնել է կանանց ուսուցչական սեմինարիա, երկու տարուայ դասընթացով. կանայք այնտեղ ձրի են ուսում ստանում և վերջնական քննութիւն տալուց յետոյ նրանք իրաւունք են ստանում ուսուցչութեան պաշտօն վարել թէ Գերմանիայում և թէ արտասահմանի ուրիշ պետութիւններում, առաւել շատ պաշտօններ գտնում են Անգլիայում և Ամերիկայում։ Ընկերութիւնը հիմնեց դարձեալ առևտրական ուսումնարան, որտեղ աշակերտուհիները թէ տեսականապէս և թէ գործնական կերպով կարողանան սովորել, որ յետոյ լաւ ռոճիկով պաշտօն վարեն առևտուրի մէջ։ Այս մտքով 1874 թ. բացվեցաւ առևտրական ուսումնարան մի տարի դասընթացով, որտեղ աւանդվում են՝ առևտրական թղթակցութիւն (торговое счетоводство), առևտրական հաշուապահութիւն և վայելչագրութիւն։ Առաջին տարին մտան այնտեղ 14 աշակերտուհի, որոնք 1875 թ. կարողացան շատ լաւ քննութիւն տալ։ Այս աղջիկներից մեծ մասը առևտուր էին սովորում, բայց դժուարութեամբ են պաշտօն գտնում, որովհետև Շտուտգարտի համար այս դեռ նորութիւն է և նորա համար դժուարութեամբ են պաշտօն տալիս դրանցը. այդ պատճառով թէպէտ առևտրական ուսումնարանումը պարապմունքը շատ յաջող է գնում, բայց պարապելցանկացողները սակաւ են։ Մտածեցին որ աղջիկներին առևտրական ուսումնարան չը մտնելու պատճառներից մէկն էլ այն է, որ դասընթացը մի ամբողջ տարի է քաշում. դրա առաջն առնելու համար դասընթացը կէս տարեկան չինեցին, շաբաթական 16 ժամ պարապելով։

Ընկերութիւնը հիմնեց «օրինակելի մանկական պարտեզ» ֆրէօբելեան սիստեմայով, 1875 թ.։ Բացվելու օրը այդտեղ ինն երեխայ մտաւ, իսկ ներկայումս 56-ից աւելի է հաշվում։

Զորրոդ հիմնարկութիւնն է ձեռագործական ուսումնարանը։

Սորա հիմնվելուց առաջ բացվեցաւ «Աշխատութիւնների միջնորդական բիւրո». այս մտքով ընկերութիւնը դիմեց հասարակութեանը խնդրելով նորանից թէ պատուէր (заказъ) և թէ գործ (работа)։ Հասարակութիւնը, յայտնի բան է ընդունեց ուրախութեամբ և «բիւրո» լցվեցաւ շուտով թէ գործերով և թէ պատուէրներով։ Կայ այնտեղ և ուրիշ «բիւրո» որտեղ աղախիններ են գտնում և տեղ տալիս նրանց։

Այս ընկերութիւնը մտադիր է կանանց արհեստական ուսումնարան բանալ, որի գլխաւոր առարկան լինի նկարչութիւնը։ «Շվաբեան կանանց ընկերութիւնը» ստանում է շատ ամսագրներ, ունի իր գրադարանը։ Գրադարանի գրքերից կարող են օգուտ քաղել բացի անդամներից և—առևտրական և ձեռագործական ուսումնարանների, սեմինարիայի

*) «Женское образованіе» № 9. 1878 г.

մեծ աչքերն այդ կրիտիկական րոպէում յայտնի կերպով արտայայտում են այն ներանդուն երախտագիտական մաղթանքը, որ հաւատացեալի սրտից բարձրանում է դէպի Ամենաբարձրեալը. Ճշմարիտ է, նրա շրթունքը չեն շարժվում, բայց նրա աչքերն ամեն բան ասում են: Այդպիսի մի եղեռնագործութենից յետոյ, իդէական կնոջ բոլոր ներքին և արտաքին ուշխարհը մի կատարեալ անդորրութեան մէջ է, նրա դէմքի բոլոր գծերից և ոչ մէկն այլայլված չէ. և եթէ իսրայէլական կենդանարար հաւատի ազդեցութիւնը չը լինէր, ես ոչ մի կերպով ինձ չէի կարող բացատրել նրա դէմքի գծագրութեան կատարեալ ներդաշնակութիւնը: Այդ հերոսուհու կողքին փոքր ինչ աւելի նսեմ կանգնած է նրա աղախինը ձեռքին բռնած մաղադաթը, որի մէջ դնում է սպանվածի գլուխը. դա Պալէստինայի հարազատ կրակոտ զաւակն է. որքան Յուդիթի մէջ բարձր կլասիկական և իդէական անխռովութիւն է երևում, այնքան էլ նրա աղախնի մէջ վրդովմունք, յուզմունք և կատարեալ վրէժխնդրութիւն է երևում: Այդպիսի մի երևելի գործ արդիւնաբերելու համար, բաւական չէ լինել միայն նկարիչ, նկարչութիւնը այդպիսի ստեղծագործութեան համար չափազանց չնչին բան է. այդպիսի գործի համար մարդ պէտք է լինի պատմաբան, հոգեբան, փիլիսոփայ և վերջապէս լաւ փորձառու նկարիչ:

Այնտեղ ես տեսայ և մի ուրիշ պատկեր —la tentation—ես կեանքումս ոչինչ չեմ տեսել, որ այդպէս զմայլեցուցիչ, հոյակապ և վերջին աստիճանի կլասիկական լինի, բայց և այնպէս պէտք է խոստովանած, որ մի և նոյն ժամանակ դրա պէս էլ զզուելի, զարշելի ու քստմնելի բան չեմ տեսել. tentation (փորձութիւն) խօսքն արդէն ինքն ըստ ինքեան ցոյց է տալի թէ ինչ կարող է լինել այդ ճիւաղը: Այնտեղ ներկայացրած է ատամնեը թափած մի հնացած, փտած պառաւկին, որը փորձութեան է հրաւիրում մի սիրուն ջահիլ երիտասարդի, որը մի գինու կարուն ձեռքին ընկել է արդէն Բաքոսի արքայութեան մէջ:

Երկար ժամանակ այդ պատկերի վրա զմայլած նայելուց յետոյ, շարունակում եմ նայել ուրիշ պատկերների վրա. բազմաթիւ նկարներ կախարդական երազի նման, մէկը միւսի ետևից սահում անցնում են իմ աչքի առաջ: Դրանցից մէկը մի անպատմելի ոյժով գրաւում է իմ հայեացքը. ես սկսում եմ ուշադրութեամբ զննել դրան. այդպիսի դիպուածներում ես ժամանակը կորած չեմ համարում, որովհետև գեղարուեստն էլ նոյն չափ կրթիչ և ազնուացնող ազդեցութիւն ունի մարդուս վրա, որչափ և մի լաւ ու քանքարաւոր հոգևնակից մշակված րօմանը. այն ինչ որ բանաստեղծն ինձ ասում է պերճ ու շռայլ հիւսված նախադասութիւններով, նոյնն ինձ կըրկնում է նկարիչը վրձինի անձայն շարժուածքով: Ինչպէս ես վերը յիշեցի, ես կանգնած էի մի պատկերի առաջ. պատկերը ներկայացնում է գարնանային մի լուսնեակ գիշեր, խաղաղ երկնակամարի հորիզոնից կամայ բարձրանում է լրացած լուսինը, հովտի մէջ վազող կարկաջասահ փոքրիկ գետակի ուրախ ալիքներն իջնելով ու բարձրանալով, խաղում են հպարտ լուսնի արծաթափայլ ճառագայթների հետ:

Ամբողջ գետակը բոլոր իր օձապտոյտ տարածութեամբ ծածկված է կանաչազարդ ծառերով: Կարծես այդ սիրուն պէչդաժից մի տեսակ անուշահոտ պալասանեան թարմութիւն է արտաթորվում. այնքան բնական ու խափուսիկ է այդ պատկերը, որ մարդ դրա առաջ մի քանի վայրկեան կանգնելուց յետոյ, մի տեսակ թարմ սարսուռ է զգում բոլոր իր մարմնու վրա, և կարծես մարդ գիշերվայ խոնաւութենից սառեցված՝ ակամայ կամենում է հեռանալ այդ տեղից: Որչափ գեղեցիկ է բնութիւնը նկարչի այդ հրաշալի վերմակի տակ: Այնտեղ ամեն բան բնական, ջուրը, ջրի եզերքի մանրիկ քարերը, աւազը, խոտը, գիշերային խորհրդաւոր լռութիւնը, մի խօսքով դա մի կատարեալ հրաշք է:

Ինձ բոլորովին անհնարին է մի առ մի նկարագրել այնքան մինը միւսից գեղեցիկ ու հրաշալի պատկերների մանրամասնութիւնները, և վերջապէս կարիք էլ չը կայ այդ անելու, որովհետև այդ պատկերներն արդէն ինքն ինքեան կենդանի յայտնում են թէ ինչ են իրանք, և եթէ մէկը բաւականին ընդունակութիւն չունի տեսնել և զգալ նրանց արտայայտութիւնը, այն ժամանակ իմ խօսքերն էլ բոլորովին անօգուտ են, որովհետև որքան էլ կենդանի գոյներով ես նկարագրէի այդ գեղարուեստական հրաշքներն, այնուամենայնիւ ես բոլորովին համոզված եմ, որ իմ խօսքերը բոլորովին անզօր են նրանց նկարագրել այնպէս, ինչպէս նրանք յիրաւի նկարված են:

Մենք գիտենք որ պ. Միրզոյեվը մտադիր է ծախել իր պատկերները: Ես անկեղծաբար ցաւում եմ, որ մեր քաղաքը կը զրկվի մի թէև փոքրիկ, բայց գեղեցիկ թանգարանից:

Մ. Մ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

3 հոկտեմբերի

Անցեալ նամակումս ես յիշել էի որ մի ամբողջ գիւղում չէր գտնված ռուսերէն լեզուն գիտացող մի անձն, որ թարգմանէր զիւղականների մի կալուածատիրոջ վրա անելու գանգատը:

Տգիտութեան պատճառով մեր գիւղականը միշտ մնասվում, հարստահարվում է:

Նորերումս ինձ պատահեց կարդալ մի պայմանագիր որ N. գիւղի բնակիչները կապել էին մի կալուածատիրոջ հետ: Պայմանագիրը սկզբից մինչև վերջը միայն N. գիւղացոց պարտաւորութիւններն էր յիշում, իսկ կալուածատիրոջ պարտաւորութիւնների մասին և ոչ մի խօսք:

Այդ պայմանագիրը արդարացնում էր ժողովրդական այն առածը, որ ասում է թէ «Ուրագը միշտ իր կողմն է տաշում»: Երբ որ ես թարգմանում էի պայմանագրի յօդուածները, նրանք (գիւղացիք) մնում էին սառած. «մենք այս ինչ բանը խօսել չենք—ասում էին նրանք—այն ինչը թէև խօսել ենք, բայց ոչ այդպէս ինչպէս գրված է». մի խօսքով յայտնվեցաւ որ գիւղի պատգամաւորները ստորագրել էին մի պայմանագիր, առանց նրա պարունակած յօդուածների իմաստը ըմբռնելու: Զարմանալի չէ ուրեմն որ մեր հայ գիւղացին իր բազմաթիւ խնդիրների լուծումը բաւականացուցիչ կերպով չէ ստանում, որովհետև ինքը պետական լեզուն չը գիտէ, իսկ խնդրագիր գրողները, որոնց նրանք դիմում են, վեր են առնում նրանցից մի թերթ գրուածքի համար 5—10 ռուբլի: Այդ պարտները առնելով նրանցից այդպիսի կլորիկ գումարներ մինչև անգամ ուշադրութիւն չեն դարձնում պատշաճապէս գրելու վրա, այնպէս որ գիւղացուն շատ անգամ վերադարձնում են նրա խնդիրը որպէս զի նա ուղղէ սխալները, այդ պատճառով նա հարկադրվում է վճարել կրկին մի քանի ռուբլիներ: Մի քանի խօսք ևս տգիտութեան հետևանքի՝ մնոտիապաշտութեան վրա:

Մի գիւղում հիւանդանում է գիւղացիներից մէկը: Նա հրաւիրում է քահանային և խնդրում է, որ կանանց աշխատութեան մէջ հարկաւորութիւն չէ գտնում:—Կարծեմ, ոչ: Անցէք, օրինակ, մեր Թիֆլիսի յետնկած, խուլ ու մութ թաղերը, հետաքրքրվեցէք այնտեղ կենացողների դրութեամբ, մի քանի բոպէ ձեր հայեացքը դարձրէք չորս կողմ և դուք ինքներդ բացասական պատասխան կը տաք: Նայեցէք ահա, խեղճ որբեայրի կինը, յատակի վրա նստած, կոչտ—կոպիտ կարը ձեռքին հազիւ կարողանում է անցկացնել ասեղը նրա միջով. այդ ոչինչ. թող ծանր լինի գործը, փոյթ չէ, վարձատրութիւն լինի գոնէ օրինաւոր, որ կարողանայ իր մանր որդկերանց համար հաց միայն—ու մոմի կտոր գնել. նա այդքան դիւրագրգիռ աշխատութեան համար ստանում է ոչ աւել քան 25—30 կոպէկ: Ուշադրութիւն դարձրէք, որքան աղջիկներ յաճախում են մեր ծխական ուսումնարանները. մտածենք մի փոքր այդտեղ աւարտելուց յետոյ ինչ պէտք է անեն նրանք (խօսքս աղքատ դասի վրա է), հիմնաւոր ինչ են սովորում այդ տեղ, որ կարողանան օգուտ քաղել նրանից.—ոչինչ, կատարեալ ոչինչ: Այդտեղ հազիւ սովորում են վարժ կարդալ, գրել և հաշվել—այս գիտութեամբ նրանք ինչ պաշտօն կարող են վարել: Լաւ չէր լինի, որ գոնէ ձեռագործը և մի քանի ուրիշ արհեստներ օրինաւոր աւանդվէին այդ տեղերը, որ աղջիկները աւարտելով այդ տեղ գոնէ այդ միջոցով փող վաստակէին: Բայց դժբաղդաբար, սրանց էլ միւս անկիրթների նման վիճակված է լինում սպասել, որ մինը գայ, պսակվի սրանց հետ և մի կտոր հաց ուտեցնէ:

Սրա նման և սրանից վատթար դրութեան մէջ են մեր կանայքը, բայց ոչ ոք չէ հոգում նրանց մասին, չէ մտածում ապահովել նրանց կեանքը....

Մեր յիշած մի քանի ծրնակներով բաւական աւետարան կարդալ իր վրա: Քահանան խոստանում է կատարել նրա խնդիրը, բայց առաջարկում է և բժիշկ հրաւիրել: Որքան և համոզում է քահանան, անկարելի է լինում հիւանդին համոզելը:

Քահանան մի քանի անգամ կարդում է աւետարանը նրա վրա, բայց հիւանդը թեթեւութիւն չէ զգում, նա դիմում է մի խաբեայ քուրդ գրբացի, որը ըստ պատկանելոյն նրան խաբում քսան ռուբլին առնում գնում է: Մի այլ իրողութիւն: Ինքնակոչ բժիշկներից մինը բժշկում էր հիւանդներին միայն նրանով, որ սնափեռուր հաւերի արիւնով մի քանի գծեր էր քաշում ձուի վրա....

Մի և նոյն անձը երբ ցանկանում էր ձուաձեղ ուտել, բերել էր տալիս ձուեր և փնթփնթալով քթի տակին մի քանի խօսքեր, գնում էր հայելին իր դէմը, իւրաքանչիւր ձուն բռնում էր հայելու առաջ և եռքը կոտրում էր ու հրամայում ձուաձեղ չինել....

Այստեղ կարելի է յիշել ռուսական այն առածը, որ ասում է թէ «И волкы сыты и овцы цѣлы». լաւ մեթոդ չէ՞ բժշկելու, ընթերցող, հիւանդն էլ կառողջանայ, բժիշկն էլ կը կշտանայ.... Մեր ուսումնարանների մասին գրելը թողնում եմ մի այլ անգամ:

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Սեպտեմբերի 30-ին, կիրակի օր, ԹԻՖԼԻՍԻ կլասիկային գիմնազիայում կատարվեցաւ այդ հիմնարկութեան տարեկան հանդէսը: Հասարակութիւնը բազմաթիւ էր գիմնազիայի դահլիճում: Գիմնազիստները խօրով երգեցին մի քանի երգեր, նոյնպէս գիմնազիստների նուագախումբը (օրկէստրը) շատ գեղեցիկ ածեց մի քանի պիէսաներ: Մի ռուս քահանայ և ինքն գիմնազիայի դիրեկտօր պ. Մարկով ճառեր կարդացին: Տարեկան հաշվից երևում է որ գիմնազիայի աշակերտների մեծ մասը ռուսներն են, նրանցից յետոյ թիւով ամենաբազմաթիւները հայեր են, յետոյ վրացիներ և վերջապէս թուրքեր. կան և մի քանի գերմանացիներ և լեհացիներ: Հանդէսը վերջացաւ պարգևաբաշխութեամբ: Ոսկեայ մեդալ այս տարի ստացաւ մի գերմանացի, իսկ արծաթեայ մէդալը մի ռուս աշակերտ: Պարգևներից մի քանիսներ ստացան և թուրք աշակերտներ: Հանդէսը վերջացաւ «Боже царя храни» երգով:

—

«Голосъ» լրագրում կարդում ենք, որ «Военно-медицинскій Сборникъ» վերջին տետրակի մէջ տպված է օրիորդ Շաբանովի գիտական մի աշխատանք «Միզային արտազրութեան մասին երևեւ ֆրէօբելեան մանկական պարտէզի—աշակերտուհիները:

Զեռագործական ուսումնարանը բացուեցաւ 1874 թ. որտեղ նկարչութեան օգնութեամբ անցնում են ամեն տեսակ ձեռագործներ և մեքենայի վրա, որոնք ոչ թէ միայն կը հարկաւորվին ընտանեկան գործածութեան համար՝ այլ և վաճառելու համար: Սկզբումը այդ տեղ սովորում էին 23 աշակերտուհի և 2 դասատու ունէին. 1876 թվին 416 աշակերտուհի կար. առաջվայ բնակութեան տեղը աւելի ընդարձակվեցաւ և 2 ուսուցչի տեղ 6-ը հրաւիրվեցան, մէկ ուսուցիչ էլ նկարչութեան համար: Իւրաքանչիւր ուսուցչին առանձին պաշտօն է յանձնուած—մէկը սովորեցնում է ձեռքով կար սպիտակեղէնների, միւսը մեքենայի վրա, երրորդը չորեր կարելու, չորրորդ ասղնագործութիւն և այլն: Վերջապէս սկսեցին ուսումնարանումը պատուէրներ ընդունել, այնպէս որ աշակերտուհին և սովորում էր և փող վաստակում մի և նոյն ժամանակ:

Արհեստական ուսումնարանները առաջացած են նոյնպէս Բէլգիայում, Ֆրանսիայում և Աւստրիայում: Ռուսաստանը համեմատելով Գերմանիայի հետ կարծես մեծ քայլեր է արել: Նա փոքր ժամանակում կարողացաւ կանանց բժշկական բարձրագոյն ուսումնարան բանալ, որտեղ աւարտողները, երեի մօտիկ ապագայում, երիտասարդ բժիշկներին հաւասար իրաւունքներ կը վայելեն: Ցաւոք սրտի պէտք է ասենք, որ չը նայելով որ կանայք—բժիշկները այս վերջին պատերազմին Բալկանեան թերակղզու վրա ցոյց տուին իրանց մինչև անգամ գերազանցութիւնը երիտասարդ բժիշկներից, ասում ենք, չը նայելով նրանց ընդունակութիւններին, մինչև այսօր դեռ չեն վայելում երիտասարդներին հաւասար իրաւունքներ:

Բացի այդ Ռուսաստանը ունի կանանց բարձրագոյն ուսումնարաններ—Պետերբուրգում (Բեստուժեան կուրսեր), Մոսկվայում, Խարկովում, անցեալ տարի հիմնվեցան և Կիեվում. հիմնվելու են նոյնպէս բարձրագոյն կուրսեր կանանց համար և Օդէսայում: Մոսկվայում մենք տեսնում ենք տիկին Ֆիշերի կանանց կլասիքական գիմնազիա, որտեղ աւարտողները բարձրագոյն հրաման ունեն դասատվութիւն անել արական գիմնազիայի չորս ստորին դասատներում և իգական գիմնազիայի բոլոր դասատներում: Իսկ ինչ կը վերաբերի արհեստական ուսումնարաններին՝ Ռուսաստանը հեռու չէ գնացել:

Միայն այս վերջին ժամանակները Պետերբուրգում կազմվեցաւ մի առանձին կոմիսիա, որը մշակում է սորա նախագիծը: Մոսկվայում նոյնպէս կազմվել է մի ուրիշ կոմիսիա: Վերջապէս նոյն իսկ մեր Կովկասում արդէն մի քանի տարի է բացվել է մանկաբարձական ուսումնարան որտեղից երկու և կէս տարի ընթացքում աւարտում են մանկաբարձուհիներ և դրանով իրանց ապրուստը հայթայթում:

Իսկ մեր հայուհիները դարձնում են երեսը այսպիսի մի օգտաւէտ հիմնարկութիւնից: Շատ բան կարելի էր ասել թէ ինչ են արել կանայք և—ինչ են արել կանանց ապահովութեան համար, բայց սա չէ իմ յօդուածիս նպատակը: Շատ է խօսացել սրա մասին արևմտեան և Ռուսաստանի մամուլը, այս ամենը յայտնի է մեր մամուլի առաջնորդներին, բայց, դժբաղդաբար, նրանցից շատ սակաւ մասը դադրեց իր ուշադրութիւնը այս խնդրի վրա: Ինչին արդեօք վերաբերենք այդ անտարբերութիւնը. արդեօք անհամակրութեան: Բայց հարցնում ենք. մթթէ մեր կանայք կարեորութիւն չունեն աշխատելու. մթթէ մեր ժողովուրդը այնքան հարուստ պարզ ապացուցեցինք, որ մեր կանայքը ևս առաւել ունեն կարեորութիւն արհեստ սովորելու:

Մթթէ չէ կարելի ճար անել նրան: Մթթէ չէ կարելի մի որ և իցէ միջոցով դրանց կեանքը ապահովացնել, որ մեր օրիորդների կեանքը ամուսիններից չը լինի կախված:—Առաջ թող բաւականանք քչով, իսկ յետոյ կարող ենք ընդարձակել մեր գործունէութեան շրջանը:—Բայց, ոչ, մեր հայերը չեն սիրում փոքրից սկսել, նրանք ամեն բան միանգամից են ուզում ձեռք բերել: Թող օրինակ առնենք գոնէ «Շվարեան ընկերութեան» բացվող ուսումնարաններից, որտեղ առաջին անգամը 3—5 աշակերտուհի մտան, բայց հետզհետէ աշակերտուհիների թիւն էլ աւելանում է, չինութիւնն էլ ընդարձակվում: Ինչու՞ առժամանակ մեծ ծախսերի ենթարկվել. չէ՞ կարելի արդեօք, որ մեր ծխական ուսումնարաններից մի մի սենեակ դրա համար նուիրվի, մի սենեակ, որտեղ արհեստներով պարապել ցանկացողները կարողանան օգուտ քաղել: Կարծեմ դա շատ դժուար իրագործելու չէ. հարկաւոր է միայն սկիզբն առնել, իսկ համակրողներ էլ կը գտնվեն, մասնակցողներ էլ, և մեր ծխական ուսումնարանի մօտ սկսված արհեստանոցը կը տեղափոխվի մի առաւել ընդարձակ տեղ և արհեստների տեսակն էլ կը բազմանայ:

Բայց ուրիշ ոմ, բայի մեզ կանանցից հոգ պիտի տանէ սրա մասին. մթթէ յիրաւի Թիֆլիսեցի հայ կինը սատանայի սերունդ է ինչպէս «Մշակի» թղթակիցներից մէկը ասում է—անընդունակ է ոգևորվելու..... Մթթէ նրա սիրտը, իրաւ, այնպէս քարացել է, որ կարողանում է նայել անտարբերութեամբ իր քրոջ թշուառութիւնների վրա:

Օր. Ն.

խաների զանազան հասակներում, բնական գրութեան պայմանների և զանազան դիէտայի ժամանակ։» Ռուս լրագիրը ասում է որ զանազան դոկտորական դիսերտացիաների թւում շատ քիչեր կը գտնվեն, որոնք կարելի էր համեմատել Շաբանով օրիորդի գրվածքի հետ, թէ գիտնական ամբողջութեան և ճշդութեան կողմից և թէ նրա գործնական արժանաւորութեան կողմից։ Օրիորդը ասիստենտուհի է Ս. Պետերբուրգի կանանց կուրսերի մօտ հիմնված մանկական կլինիկայի մէջ։ Նա երկու տարի է որ աւարտել է իր բժշկական ուսումը։ Ամենալաւ ապացոյց օր. Շաբանովի գրուածքի արժանաւորութեան այն կարող է համարվել, որ նրա աշխատանքը ընդունված է և տպված է եւրոպական ամենալաւ բժշկական ամսագիրներում և մի և նոյն ժամանակ այնքան գովասանքով են խօսում արտասահմանում այդ աշխատանքի մասին որ վիճակվում է միմիայն ամենանշանաւոր և իսկապէս ուսումնական գրուածներին։ «Голосъ» աւելացնում է որ մեզանում ընդունված է անուանել գիտնական կանայք նրանց, որոնք բարձրագոյն ուսում են ստացել։ Բայց բարձրագոյն ուսում ստանալու և ճշմարիտ գիտնական լինելու մէջ մեծ զանազանութիւն կայ։ Շաբանով օրիորդը առաջինն է Ռուսաստանում, լրագրի կարծիքով, որ ճշմարիտ արժանի է գիտնական կնոջ անուանակոչութեան։

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ. «Խ...գիւղի բնակիչներից երկուսը մի այլ գիւղացու հետ վերաբերում են տուն։ Ճանապարհին երկուսից մէկը ձիաւոր օտար գիւղացու ետեը նստած լինելով, բռնում է նրա բերանը, միւս ընկերն էլ հանում է և երկուսը միասին օտար գիւղացուն ձիուց ցած են գցում և կողոպտում են նրա քսակում գտնված թէ փողերը և թէ մօտ 700 ռուբլու մուրհակները։ Գործը յանձնված է քննիչին։»

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, որ այնտեղ յայտնվել են մի քանի գիշերաշրջիկ անձինք, որոնք գիշերվայ ժամի 9-ին կամ աւելի ուշ պատահելով մարդկերանց, նրանցից ծախսի փող են պահանջում առաջ խնդրելով, իսկ եթէ բացասական պատասխան են ստանում, այն ժամանակ իրանք կողոպտում են։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

Այս օրերս Կ. Պոլսի պոլիցիան 26 մարդիկ կալանաւորեց, որոնք պատկանում են Ֆրանմասօնական ընկերութեանը, և որովհետև նախկին սուլթան Մուրադն էլ այդ մի և նոյն ընկերութեանն էր պատկանում, հետևապէս և Թիւրքական վարչութեան հեռատես անդամները, երկար ու բարակ խորհրդածութիւններից յետոյ, վերջապէս այն եզրակացութեան հասան, որ մուրադականները կամենում էին դաւադրութիւն կազմել նոր սուլթանի դէմ։ Այս զուշակութիւնը ճշմարիտ է թվում մանաւանդ նրա համար, որովհետև կալանաւորվածների թւում գտնվում է նոյնպէս և Հայկայր (?) անունով մի հայ, որը Մուրադի կարճատև թագաւորութեան ժամանակ յայտնի էր նրանով, որ շատ ջերմ բարեկամական յարաբերութիւններ ունէր սուլթանի հետ, և նրա մօտ քարտուղարի ու խորհրդատուի պաշտօն էր վարում։ Հայկայրը կալանաւորվեցաւ Կ. Պոլսի Բուիւկդէրէ անուանված թաղում գիշերվայ ժամը երկուսին։ Նրան մինչև անգամ միջոց էլ չը տուին հագնվելու, և այդպէս մէտակ շապկով՝ նրան մի մակոյկի վրա շտապելով տարան զինարանը։ Ճանապարհին պոլիցիական օֆիցէրը, խղճալով նրա վրա, ծածկեց նրան իր վերարկուով։ Հայկայրի բանտարկութեան օրից սկսած, նրա ընտանիքը նրա վրա այլ ևս ոչինչ տեղեկութիւն չունի։ Պոլիցիայի այս տեսակ վարմունքը բացատրվում է նրանով,—թէև դա շատ հաւանական չէ կարող լինել—որ մի զուցէ թէ յիրաւի սուլթանն այլ ևս չը կարողանալով տանել այսքան յեղափոխական շարժումները, գրկված լինի խելքից։

Նշանաւոր Բէկէր փաշայի եղբայրն այս բոպէիս զբաղված է օտարազգի օֆիցէրներ վարձելով այն ժանդարմերիի համար, որը նոր շանակված է Փոքր-Ասիական նահանգները գնալու։ Ժանդարմերիի խումբը գլխաւորապէս նշանակված է Ասորեստանի վիլայէթի համար։ Այս ժանդարմերիի կազմակերպութեան մասին մի ճիշտ գաղափար կազմելու համար, բաւական է ասել, որ նրա մէջ առանց ազգութեան զանազանութեան ընդունվում են տեսակ տեսակ բախտախնդիրներ, որոնք միասին առնված, կազմում են այն հռչակաւոր եւրոպական լեգիոնը, որին հարատահարված ազգութիւններն այնպիսի կարօտով էին սպասում։ Երևակայում ենք թէ ժողովուրդը ինչ տեսակ պաշտպանութիւն կարող է գտնել այդ նոր տեսակ ենիչէրներից։ Ժանդարմերիի մի այս տեսակ խումբ արդէն կազմ ու պատրաստ է. դա նշանակված է Դամասկոսի համար, և առաջին հրամանին է սպասում, որ ճանապարհ ընկնի դէպի հունձի երկիրը։

Այժմ մի քանի լրագիրներ հերքում են Վիէննայի «Polit. Corresp.» լրագրի այն խօսքերը, որով նա ասում էր թէ իբր Գուսինեան և Պլավեան նահանգների գրաւման առիթով՝ Բ. Դրան և Զէրնոգորիայի մէջ համաձայնութիւն է կայացել։ Ընդհակառակը, լրագիրների խօսքերին նայելով, այդ հարցի վերաբերութեամբ Թիւրքիայի և Զէրնոգորիայի մէջ դեռ շատ մեծ անհամաձայնութիւններ ու անբաւականութիւններ կան։ Դեռ շատ ժամանակ չէ, որ Մուխտար-փաշան մի պաշտօնական հեռագիր ուղարկեց Բարձրագոյն Դրան, որի մէջ ասված էր, թէ վերոյիշեալ երկու նահանգների մուսուլման ազգաբնակութիւնները հաստատ մտքներումը դրել են, որ զէնքով ընդդիմադրութիւն գործեն Զէրնոգորցիներին, եթէ միայն այս վերջիններս յանդգնեն գրաւել նրանց նահանգները։ Արդէն յայտնի է թէ ինչ կը լիներ մի այսպիսի հեռագրի նպատակը։

Սավֆէտ-փաշան Գուսինեան նահանգի այն մասի փոխարէն, որ գտնվում է Ալբանիայի մօտ, առաջարկեց Զէրնոգորիայի Նիկոդայոս իշխանի ներկայացուցչին մի կտոր երկիր, որ գտնվում է Պոդգորիցայից դէպի հիւսիս-արևմուտք։ Պէտք է նկատած մի և նոյն ժամանակ, որ այս նոր առաջարկված երկիրը թէ տարածութեամբ, թէ պտղաբերութեամբ, թէ բնակիչների թւով և թէ իր առանձին յատկութիւններով շատ անգամ ստոր է Գուսինեան նահանգից։ Բայց այս, որովհետև Սավֆէտ փաշայի այս առաջարկութիւնը համաձայն չէ Բերլինի դաշնադրութեան կանոններին, ուստի հաւասի կարելի է ասել որ իշխան Նիկոդայոս բնաւ չի համաձայնվի մի այսպիսի երեխայամիտ առաջարկութեան, և նա անմիջապէս կը վճռի գործը ոչ թէ դիպլոմատական ճանապարհով, այլ պարզ կը հրամայի զօրքերին զէնքով գրաւել այն նահանգները, որոնք Բերլինի ընդհանուր եւրոպական ժողովով վճռված է տալ Զէրնոգորեան իշխանութեան։ և այսպէս զէնքի միջոցով գրաւելով այս նահանգները, իշխանը կը թողնի բոլոր պատերազմական հետևանքների պատասխանատուութիւնը Բ. Դրանը։

Այս օրերս արդարադատութեան մինիստր Սայիդ-փաշա մի նոր կարգադրութիւն արաւ, որի զօրութեամբ այսուհետև արգելվում է առևտրական դատարաններում և առհասարակ այլ և այլ խնդրատութիւնների ապահովական թղթերի և հաւատարմաթղթերի մէջ ֆրանսիական լեզուի գործածութիւնը։ Եւրևի Թիւրք մինիստրը կամենում է այդ լեզուն փոխարինել իր մայրենի լեզուով։ Օտար լեզուով շատ էր պաշտպանվում արդարութիւնը, այժմ մնացել է, որ նա Թիւրքաց լեզուով պաշտպանվի։ Մինիստրի այս տեսակ վարմունքը մեզ ակամայ յիշեցնում է Պարնաս լեռան հռչակաւոր երաժիշտները։ Մինիստրի այս տեսակ վարմունքը կատարեալ խառնակութիւն զցեց առևտրական գործերի մէջ, և առհասարակ մեծ անբաւականութիւնների առիթ եղաւ։ Առևտրական հաւատարմատարների մեծագոյն մասը բաղկացած է օտարազգի փաստաբաններից. այժմ ամենքը գլուխները կորցրած չը գիտեն ինչ անեն։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Դաւրէժ, 9 սեպտ.

Թէ Ռուսաստանի և թէ Թիւրքիայի լրագիրներում, այլ և տպագրված հայերէն շատ աշխարհագրութիւնների մէջ, մեծ շատ անգամ հանդիպել է կարդալ սխալ տեղեկութիւններ Պարսկաստանի հայերի վիճակագրութեան (Statistique) մասին, որոնց գրեթէ բոլորն էլ ընկնում են չափազանցութեան մէջ։ Նրանցից շատերը ճիշտ չիմանալով Պարսկաստանի երկու վիճակներում գտնված հայերի թիւը, սխալմամբ տանում հաստատում են նրանց աշխարհամարը 150,000-ից մինչև 200,000-ի, որոց մի քառորդ մասն անգամ, գոյութիւն չունի բովանդակ Պարսկաստանում, ինչպէս ներքևում դրածս երկու վիճակների առանձին առանձին թւերից կերևայ, որը ես մի առանձին պարտք համարելով, աշխատեցի դուրս բերել նրան որքան կարելի էր հաստատ աղբիւրից և որքան կարելի էր ստուգելով, որպէս զի ծառայութիւն էլ արած լինեմ նոր աշխարհագրութիւն հեղինակողներին։ Սակայն դեռ մանրամասնօրէն չը գրած, յարմար եմ համարում «Մշակի» ընթերցողներին ծանուցանել, որ Պարսկաստանում բնակված հայերի անհատական թիւը, մի ամբողջական թւով 40,000-ից աւելի չէ կարող լինել։

1) Նախ սկսում եմ Ատրպատականի վիճակից, որ դուրս եմ բերել Անդրէաս արքեպիսկոպոսի 1875 թվի արած ազգահամարից, տպագրված «Արարատ» ամսագրում։ Թէպէտ ազգահամարը պէտք է լինէր չունչի կամ անհատի վրա, բայց այդ վիճակագրութիւնը տան վրա եղած լինելով, ես էլ հետևում եմ նորան։

Դավրէժ քաղաքի երկու թաղերում կան 435 տուն, Դավրէժի շրջակայ 4 գիւղերում 199 տուն։ Արտազի գաւառի 3 գիւղերում 148 տ.։ Խոյ քաղաքում և նրա շրջակայ 5 գիւղերում 241 տ.։ Սալմաստ գաւառի 26 գիւղերում 1001 տ.։ Որմի քաղաքում և նրա շրջակայ 24 կտոր գիւղերում 483 տ.։ Որմի նահանգի Սօմա գաւառի 5 գիւղերում 29 տ.։ Որմի նահանգի Բարանդուզ գաւառի 12 գիւղերում 193 տ.։ Սուլդուզ գաւառի 8 գիւղերում 88 տ.։ Սովուկբուլաղ քաղաքում և նորա 2 գիւղերում 22 տ.։ Մարաղա քաղաքում և նրա շրջակայ 7 գիւղերում 112 տ.։ Կարադաղ գաւառի (Ռէյվանի, Մէչափարի, Մնջուանի և Դղմարի) 29 կտոր գիւղերում 601 տ.։ Ուրեմն բոլոր Ատրպատականի հայ տների գումարն է 3552, որոց եթէ որ չունչի դարձնենք, ինչպէս սովորութիւն է, տունը 5 հոգի համրելով, այսինքն 3552 տունը 5-ով բազմապատկելով, Ատրպատականի հայերի անհատական թիւը կը լինի 17,760 հոգի։

2) Ապա վեր եմ առնում բուն Պարսկաստանի, այսինքն Արաղստանի վիճակը, հիմք բռնելով 1851 թվի, Բէգնազարեան Թադէոս արքեպիսկոպոսի արած վիճակագրութիւնը, տպված «Մասեաց Աղաւնի» ամսագրում ի Փարիզ։ Այդ աշխարհահամարին նայելով, աւելի քան երեք հազար հայ տներ կան Պարսկաստանում, թէպէտ 1871 թվի սովի պատճառով բաւական թւով հայերից մեռան և ոմանք էլ գաղթեցին Ռուսաստան կամ այլուր, թէպէտ այդ թւերը այժմս խախտված կը լինեն բնակիչների մի քաղաքից դէպի մի այլ քաղաք և գիւղացիների խմբովին մի գիւղից դէպի միւսը գաղթելով, սակայն այդ ազգաբնակութիւնների մեծ մասը կան և ապրում են Պարսկաստանի հետեւեալ տեղերում, որոնք յիշված են նոյն ազգահամարի մէջ։ Ես արել եմ միայն մանաւոր փոփոխութիւններ, որոնք ես ստուգապէս գիտէի։

Թէհրան քաղաքում 140 տուն։ Թէհրանի մօտակայ 3 կտոր գիւղերում 60 տուն։ Համադան քաղաքում 40 տ.։ Նորան մօտ եղող Շաւառին գիւղում 76 տ.։ Զէնդան, Ղազբին, Ռէշտ և Լէնգէվի 30 տ.։ (Սրանք շատ շատ տեղափոխվում են մի տեղից դէպի միւսը) Ղարազան գաւառում 102 տ.։ Քեղազ գաւառում 151 տ., Քեամարա գաւառում 124 տ., Գեաքլա գաւառի 9 կտոր գիւղերում 183 տ., Մալայիր գաւառի 4 գիւղերում 101 տ., Ասպահանի Ջուղայում 400 տ., նրա մօտակայ Զարմահալ նահանգի 5 կտոր գիւղերում 306 տ., Ասպահանի մօտ Փէրիա գաւառի 25 կտոր գիւղերում 1012 տ., Փիրվէրի գաւառի 16 կտոր գիւղերում 446 տ., Շիրազ քաղաքում 8 տ., Բուշիր քաղաքում 10 տ., Ընդամենն 3189 տուն, որոնց եթէ նոյնպէս 5 անդամ շատացնենք, կը գտնենք նրանց անհատական թիւը 15,945 հոգի, աւելացնում եմ սրանց վրա Ատրպատականի հայերի անհատական թիւն էլ և բոլորը միասին լինում են 33,705 հոգի։ Ես սրանց վրա աւելացնում եմ մի քանի հազար հոգի ևս, որոնք համարելով թէ ըստ բաւականի ճիշտ մտած չը լինեն այս 2 վիճակագրութիւնների մէջ, և դորանով դուք կը տեսնէք որ իմ ենթադրաբար առաջարկածս 40 հազարի թիւը հազիւ թէ կամբողջանայ, թող որ բաւականին թւով էլ մեռած և գաղթած էին, ինչպէս վերևում ասացի։ Վիճակագրութիւնը վերջացնելով, յարմար եմ համարում մի քանի խօսք էլ Պարսկաստանի հայերի դրութեան և նրանց թշուառութեան վրա խօսել։

Ահաւասիկ մի ժողովուրդ որ ցան ու ցիր է եկած հիւսիսից մինչև հարաւ, Պարսկաստանի այդ երկար հողացամաքի վրա, այսինքն Կասպից ծովի եզերքից մինչև Պարսից ծոցը։ Ահաւասիկ մի ժողովուրդ, որի մեծամասնութիւնը ոչ միայն թաւալում է թանձր տգիտութեան մէջ, այլ տարիներով զրկված է ժամասցութիւնից, քահանայից, քարոզից և ուրիշ հոգևոր մխիթարութիւնից։ Ահաւասիկ մի ժողովուրդ, որի մեծագոյն մասը ոչ միայն գիւղերում, այլ ընդարձակ գաւառներում դպրոցի երես տեսած չունեն, կան գիւղեր որոնց քահանայքն խօսում են ժողովրդի հետ թուրքերէն լեզուով, մինչև իսկ եկեղեցու մէջ։ Շատ տեղերում ոչ քահանան և ոչ իսկ ժողովուրդը հայութեան և քրիստոնէութեան վրա գաղափար անգամ չունեն։ Բացառութիւն են կազմում Թէհրանի և Դաւրէժի դպրոցները, որոնք եթէ ոչ առաջնակարգ գտնէ երկրորդական դպրոց կարող են համարվել և ուր շատ քիչերի մէջ Ասպահանի Ջուղան միայն ունի 3 անուանական դպրոց, որոնք բոլորովին նախնադարեան սիստէմայով են ընթանում. և մինչև այսօր սպասած օգուտը չեն տուել և կանոնի տակ էլ չեն։ Ահաւասիկ մի ժողովուրդ որ տգիտութեան երեսից բոլորովին մնոտիապաշտ և աւելորդապաշտ է դարձել, հաւատ ընծայելով ամենայն տեսակ վրդովների, հմայողների, գուշակողների, թովիչների և գրքացների հեթանոսական պատգամներին և թափմանները, որոնց խստիւ արգելում են աւետարանը և քրիստոնէական գրքերը։ Սակայն ով զգուշացնէ նրան այդ հաւատիական ըղձութիւններից, ով սովրեցնէ նրան սուրբ աւետարանի վարդապետութիւնը, ով քարոզէ նրան հայութիւն և քրիստոնէութիւն։ Հովիւ չը կայ որ ոչխարները նրա ձայնին լսեն, Ատրպատականի առաջնորդը հանգիստ նստած է Էջմիածնում, իսկ Պարսկաստանի առաջնորդն էլ գնացել է Հնդկաստան իր հունձն անելու։ Աստուած կարողութիւն տայ։

Եւ ինչ անէ մի այսպիսի ժողովուրդ, որ չը գիտէ բողոքականութեան, որի քարոզիչները թափոր են անում ամբողջ Պարսկաստանի քրիստոնէից շուրջը և ընդունում են իրանց դիմողներին գրկաբաց, տալով նրան ձրիապէս աւետարան և ամեն հոգեղէն կերակուր։ Թող տուր Էջմիածին, թող տուր որ նրանք լաւ սերմանեն, դու կարծում ես որ մի օր քո ճեմարանի լատինէրէն և յունարէն սովորած աշակերտները կը գան Պարսկաստան և կը լուսաւորեն, բայց ոմը և երբ, մինչև այն ժամանակ գուցէ «Արքայութիւնն Աստուծոյ բռնաբարի և բռնակք յափշտակեն զնա»։ Պարսկաստանի հայեր, մեզ ուրիշ ճար չէ մնում, եթէ ոչ մեր նախնիքների ողբացածը այսօր կրկնել «Ափսոս քեզ հայոց խեղճ ժողովուրդ, որ դերի գնամանք դէպի խորասան»։

Արմենակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՍԻՄԼԱ, 8/20 հոկտեմբերի։ Սակուբ-խանը հրաժարվեց գահից։ Նասամի Նազա-Գիլզա քաղաքում բնակվող անգլիական գործակատարը սպանվեցաւ Նազաս կոչված բնիկներից։ Կառավարութիւնը կարգադրութիւններ է արել, որ Կանդահարից մինչև Կաբուլ շուտով երկաթուղու գիծ անցկացնեն։ Տեղեկութիւններ են ստացվել, որ աֆղանական 3 հեծելազօր և 6 հետևակ գունդեր մտադիր են յարձակվել անգլիական բանակի վրա։

Կ. ՊՕԼԻՍ, 7/20 հոկտեմբերի։ Սաիդ-փաշան նշանակված է առաջին և արտաքին գործերի մինիստր, Մահմուդ-փաշան նշանակված է պետական խորհրդարանի նախագահ. իսկ Սավֆէտ-փաշային յանձնված է հսկողութիւն գործել վարչական բոլոր ճիւղերի վրա։

Կ. ՊՕԼԻՍ, 7/20 հոկտեմբերի։ Մինիստրութիւնը հետևեալ կերպով է վերակազմվել. Սաիդ-փաշան նշանակված է առաջին մինիստր, Աարիֆի նշանակված է պետական խորհրդարանի նախագահ, Սաֆաս-փաշա արտաքին գործերի մինիստր, Զէվդաթ. արդարադատութեան և հասարակական աշխատութիւնների մինիստր, իսկ Սավֆէտ-փաշա նշանակված է վերանորոգութիւնների գլխաւոր։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 հոկտեմբերի։ «Новое Время» լրագիրը լսել է, որ ներքին գործերի մինիստրութեան մէջ որոշել են, որ հրէաներին զաղթեցնեն Դօնեան զօրքերի նահանգից։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակն առաջին շրջանի արժէ 94 ր. 25 կ., երկրորդ 93 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50½ կ., չորրորդ 93 ր. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակն արժէ 224 ր. 75 կ., երկրորդ 220 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակն արժէ 90 ր. 75 կ., երկրորդ 90 ր. 37 կ., երրորդ 90 ր. 50 կ., ոսկի 7 ր. 72 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 25,59 պէնս։ Տրամադրութիւնը անշարժ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՁԱՌ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ» ստացել է

1 Սրուանձտեանց-ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ 1 ր. 25 կ.
2 Ս. Մանդինեանց-ԿՐՕՆՔ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ 1 ր. —
3 Բժիշկ Ա. Բաբայեանց ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՒՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ 1 ր. —
4 Ա. Բահաթրեանց - ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ — 25 կ.
5 Երկաթէ ԴԻՄԱԿՈՎ ՄԱՐԴԸ ԵՒ ԱՒԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ 1 ր. —
6 Ց. Շիշմանեանի - ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ ՀԱՒԱՔՈՒՄՆ Ա. 1 ր. 15 կ.
7 Փարոս 1879 — — — - թ. 1 ր. —

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԸ խնդրում է այն անձանց, որոնք իրան հետ գրագրութիւն ունէին, այսուհետև իրանց մասնաւոր նամակներն ուղղել դէպի Երևան, ուր նա այս տարի պիտի մնայ ուսուցչական պաշտօնով, իսկ պատուէրները ըստ առաջնոյն թող ուղղեն Կենտրոնական գրավաճառանոց, ուր ինքը պահպանում է իւր մասնակցութիւնը: Երևան քաղաքի և նորա շրջակաների ուսումնարանների վարչութիւնները՝ դիւրութեան համար, իրանց դրամաւոր պատուէրները կարող են ուղղել նոյնպէս և դէպի պ. Տէր Ղևոնդեանը, որը կաշխատի ամենայն արագութեամբ կատարումն տալ նոցա պահանջներին: Ցեռոյ վճարելու պայմանով գրքեր ցանկացողները դիմում են ուղղակի գրավաճառանոց:

3—3

Տաք ԵՐՇԻԿՆԵՐ (сосиски) կաղամբով և առանց կաղամբի, ՊԻՐՕԺԿԻՆԵՐ, 9 ժամից առաւօտեան, ճաշ և ընթրիք, ՃԱՇԸ 2 կերակուրներից 35 կոպ., ԳԻՆԻ, ԱՐԱՂ, ԳԱՐԵՋՈՒԻՐ, ԼԻՄՕՆԱԴ, ՋԵԼՏԵՐԵԱՆ ՋՈՒՐ ամենաէժան գներով կարելի ստանալ պանդոկում որ գտնվում է վրաց Սէմինարիայի հանդէպ, «Ռօսկիի» ընկերութեան կանաորի տակ, ԱՏԱՄԱՆՍԿԻ փողոցի վրա, Զուբալօվի տանը:

1—3

Տրվում է ՎԱՐՁՈՎ վերին յարկում մի բնակարան վեց սենեակից բաղկացած, իր բոլոր ցարմարութիւններով: Եթէ ցանկացողներ կը լինեն երկու ընտանիք բնակվելու, կարելի է բաժանել երկու մասը, չորս եւ երկու սենեակներ: Տունը գտնվում է ՆՈՐԱՇԵՆԻ փողոցում: գնի մասին հարցնել այնտեղ տան տիրոջ ԻՍԱՀԱԿ ՓՈՒՂԻՆԵԱՆՑԻՆ:

1—2

ՁԻԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՕՐՎԵԳԻԱՅԻ ՄԵԲԸՆԴ ՁԻԹԻՑ, որ պատրաստված է Մոսկվայի դեղագործ:

ԳԻՐՇՖԷԼԴՏԻՑ

Գիւոյի Ֆրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները դրդեցին ինձ պարապել նրանց արդիւնագործութեամբ և որովհետև պատիճների պատրաստելը դաղտնիք չէ և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր Ձիւթից, ես առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ՖՐԱՆՍԻԱԿԱՆ (ԳԻՒՕՅԻ) ՊԱՏԻՃՆԵՐԻՑ 40% էժան:

Յոյս ունեմ, որ ռուս բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետև նոքա առիթ չունեն ռուսաց փողերով պահպանել ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԼՈՒՆ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր դեղատունները և տեղական պահեստները: Գլխաւոր պահեստները. Մոսկվայում, Լուբեանակի դեղատուն Լա. Ի. Գիրշֆէլդտի և Ր. Կեօլեր և ընկ. Նիկոլսկիի վրա: Թիֆլիսում Յուրինովի և Բոստանջվի դեղատուն:

20—25

Կենտրոնական Գրավաճառանոցում, Դվորցովոյ փողոցի վրայ, Արծրունու Գալլերէյում, վաճառվում են հետևեալ նոր գրքերը:

1. Կարմիր լապտեր, փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած. գ.	— ր.	50 կ.
2. — նոյնը առանց կազմի.	— »	30 կ.
3. Թաւամազ մեղու՝ փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի. պատկերազարդ և կազմած.	— »	40 կ.
4. Եղբայր և քոյր մանկական վէպ. Թարգ. Զ. Մսերեանի պատկերազարդ	— »	30 կ.
5. Հսկայական ձեռքեր. մանկական վէպ, Թարգ. Զ. Մսերեանի, պատկերազարդ	— »	10 կ.
6. Փարոս Հայաստանի. պատկերազարդ հանդէս ընտանեկան ընթերցանութեան համար.	1 »	— կ.
7. Թորոս աղբար Հայաստանի ճանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրուանձտեանց	1 »	25 կ.
8. Երկունք ինքերորդ դարու. գործ Ծերենցի.	1 »	— կ.
9. Պատանեկան ներշնչումներ, գործ. Հրանտ Աստուրի.	— »	60 կ.
10. Մի կաթիլ արտասր, զոր կը հեղու Սիսակ Հայ մելսիրին վրայ	— »	35 կ.
11. Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դատախօսութիւն Ս.Արծրունու.	— »	50 կ.
12. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բաբայեանի	1 »	— կ.
13. Մարմնակազմական կամ անատոմիական բառարան Լատինելինից և Ռուսերէնից Հայերէն. բժ. Լ. Տիգրանեանցի	1 »	— կ.
14. Կրօնք. հոգեբանական հետազօտութիւն Ս. Մանդենեանի	1 »	— կ.
15. Հայկական թատրոն. Վա՞յքի իմ վեչեր, փարս երեք պատկերով գործ. Մ. Տէր Գրիգորեանցի	— »	40 կ.
16. Բեքեր բիձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ, Թարգ. Ն. Լալայեանցի	— »	25 կ.
17. Աշնանային երեկոյ գիւղում, վոդեվիլ մէկ արարուածով, փոխադրութիւն Գ. Շահբուդաղեանի	— »	25 կ.
18. Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով, Թարգ. Գ. Զմչկեանի	— »	40 կ.
19. Ժանս և Ժանէտ օպերա-վոդեվիլ, Թարգ. Գ. Շահբուդաղեանցի մէկ գործողութեամբ	— »	40 կ.
20. Պէպօ. կոմեդիա երեք արարվածով, գործ. Գ. Սունդուկեանի	— »	30 կ.
21. Պառաւներին խրատ. վոդեվիլ մէկ արարվածով Մ. Տէր Գրիգորեանի	— »	50 կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուների, դասական պեսոյքներ ուսումնարանների և աշակերտների համար, Հայերէն, Ռուսերէն և Գաղիերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և զիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարաքաղաքացիք իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետևեալ հասցէով. „Въ Тифлисъ. Въ центральную книжную торговлю“

1—10 (2)

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10 — ՏԵՂԵԿԱՑՈՅՑ — ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Հոկտեմբերի 9-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլոիմպերիալը)	8	15
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1420	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1245	—
Վիդրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	235	—
Երկրորդ 5% վիդրիչնի »	230	—
Մարսելի կուրսը 270—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա	9	45
Վենայի կուրսը արժէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը . . .	4	80
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	310	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	—	—
Շաքարը բրօցկու . . .	7	30
» միւս տեսակը . .	7	15
» չաքար աւազը. .	5	30
» տրանզիտը . . .	5	30
» մաքսը վճառած .	10	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից . . .	8	—
Միւս տեսակը հին սերմից.	7	40
Բուրդը թուչի. . . .	7	50
» թարաքամի . .	4	—
Աւլիւրը Շորագալու . .	2	20
» Երևանի . . .	—	—
Գարին	1	40
Մոմը բնաճարպի (стеар.)	12	40
Մետաքսը Նուխվայ. .	180	—
Կախեթունը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	50	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	65	—
Կոֆէն մոկօի	26	—
« լիւանի . . .	22	—
« Մանտ ինկյոն . .	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները .	1	
Ռուսաստան	2	
Աւստրիա	3	
Անգլիա	4	
Գերմանիա. . . .	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ընդունելութիւնը ցերեկվա և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան, Բժշկապետ Անանով:

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլօվո (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:

	առաւօտ:	երեկոյեան.
Թիֆլիսից .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվո. .	1. 29	11. 59
Ռիօն. . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	
	առաւօտ:	
Փոթիից. . .	9. 13	
Ռիօն. . . .	12. 13	
Միխայլօվո . .	5. 39	1. 37
Գօրի . . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

ՏԵՂԵՐԻ ԳԻՆԸ՝ ԹԻՖԼԻՍԻՑ

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ. .	90	68	38
Գօրի . . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ. .	5. 22	3. 92	2. 18
Ռիօն . . .	9.	6. 75	3. 75
Փոթի. . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բագուի տրակտից՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի: Բելիկլիչի տրակտից երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ

	կոպ.
Բաց նամակ արժէ .	2
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ. .	7
Ամերիկա	7
Պարսկաստան . . .	7
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս . . .	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 9-ից մինչև 1 ժամը:

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւնների, Քուչարեանց վիրաբուժական և աչքի հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկէվիչ վիրաբուժական հ., Բէյխ աչքի հ., Վերմիշէվ ներքին հ., ժուրավլէվ վեներական և կաշու հ., Բաբով կրծքի և ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Աստուածատուրով կանանց հ.:

Հինգշաբթի. Վերմիշեվ և Բուդկովսկի ներքին հ., Քուչարեանց սիֆիլիսի և մզային գործարանների հ., ժուրավլէվ ջղային հ.: Բաբով կրծքի և ներքին հ.:

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ., Աստուածատուրով վեներական և կաշու հ.:

Շաբաթ. Վերմիշէվ ներքին հ., Բէյխ աչքի հ., ժուրավլէվ վեներական և կաշու հ.:

Զբաղեցուցիչ՝ Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւնների, Քուչարեանց վիրաբուժական և աչքի հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկէվիչ վիրաբուժական հ., Բէյխ աչքի հ., Վերմիշէվ ներքին հ., ժուրավլէվ վեներական և կաշու հ., Բաբով կրծքի և ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Աստուածատուրով կանանց հ.:

Հինգշաբթի. Վերմիշեվ և Բուդկովսկի ներքին հ., Քուչարեանց սիֆիլիսի և մզային գործարանների հ., ժուրավլէվ ջղային հ.: Բաբով կրծքի և ներքին հ.:

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ., Աստուածատուրով վեներական և կաշու հ.:

Շաբաթ. Վերմիշէվ ներքին հ., Բէյխ աչքի հ., ժուրավլէվ վեներական և կաշու հ.:

Օքրէխտ, ատամի հ., ընդունում է իր տանը ամեն ժամանակ աղքատ հիւանդներին Բժշկանոցի տոմսակով:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՄԵՂՐԻ. Խ. Մ. Մ. Վերջին անգամ ստացված յօդուածը կը տպենք հետևեալ համարներից մէկի մէջ: Ուրիշ ի՞նչ յօդուածի մասին էք գրում: Խմբագրատանը այլ ևս ձեր գրուածներից ոչ մէկը չը կայ:

—ՆՈՒԽԻ. Աշակերտներ. Ձեր նամակը ստացանք: Կը տպենք հետևեալ համարներից մէկի մէջ:

—Կ. ՊՕԼԻՍ. «Մասիսի» խմբագրութեանը. Թիֆլիսի ուրիշ խմբագրութիւնները և գրավաճառանոցները ճշդութեամբ ստանում են ձեր լրագրի համարները, իսկ մենք շաբաթներով չենք ստանում:

—Կ. ՊՕԼԻՍ. «Մանդուէլի էֆքեար» լրագրի խմբագրութեանը. Կարդացէք վերևի պատասխանը:

Дозволено Цензурою 9 Октября 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона